ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ (WWW) ԷՋԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17»

ք. Երևան «01» Հոկտեմբերի 2017թ.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համացանցային (www) էջի ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

"3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3350000 (երեք միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Գլխավոր վարչության	ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1
ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01204231	ՀՀ 1570004845660100
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	ՀՎՀՀ 01568139
Վարչության	Հ. Մարգարյան
Հ/Հ 900013207023	
Ա. Մանուկյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 01 » նոյեմբերի 2017թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը **
1	72411300	**ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ (WWW) ԷՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** *Ստորև ներկայացվում է ՀՀ ԿԱ ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ ՔԱԳՎ) կայքի ստեղծման տեխնիկական առաջադրանքը՝ հիմնված ՀՀ Կառավարության 26. 12. 2013թ. «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» թիվ 1521-Ն որոշման վրա:* **Օպերացիոն համակարգի, տվյալների հիմնապաշարի և ծրագրավորման լեզվի ընտրություն** Վեբ կայքի տեխնիկական իրագործումը պետք է իրականացվի օգտագործելով լայն տարածում ունեցող PHP ծրագրավորման լեզուն և MySQL տվյալների հիմնապաշարը: Այն պետք է ապահովի համապատասխանելիություն տարբեր օպերացիոն համակարգերում աշխատելիս՝ օպտիմիզացված լինելով SuSE, CentOS, FreeBSD, Linux կամ այլ UNIX օպերացիոն համակարգերի ընտանիքում աշխատող Apache վեբ սերվերի համար: **Ստանդարտներ և էջկապ** Կայքի էջկապը պետք է կատարված լինի xHTML1.0 լեզվով՝ համապատասխան W3C ստանդարտներին: Կայքը ամբողջովին պետք է համապատասխանի ՀՀ Կառավարության 26.12.2013թ. «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» թիվ 1521-Ն որոշման դրույթներին: **Գրաֆիկական դիզայն** Կայքի արտաքին տեսքը պետք է լինի գրավիչ, ապահովի առավելագույնս գործածելիություն: Կատարողը պատվիրատուին կներկայացնի կայքի մուտքի և ներքին էջերի տեսքը առնվազն 3 այլընտրանքային տարբերակներով: Վերջինս 10աշխատանքային օրվա ընթացքում կներկայացնի իր առաջարկները և նկատողությունները: Կայքի դիզայնի հաստատումից հետո միայն կսկսվի կայքի ծրագրային մշակման փուլը: **Համապատասխանելիություն** Պատրաստվող կայքը կապահովի առավելագույն համապատասխանելիություն գոյություն ունեցող հիմնական տարածված զննման ծրագրային փաթեթների հետ, ինչպիսին են Internet Explorer, Mozilla Firefox, Opera, Safari, Chrome և այլն:	դրամ	3350000	1	***ՀՀ ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ***	15.12.2017թ.

		Կայքը լավարկված կլինի 1024x768 չափի համակարգչային մոնիտորների համար: **Լեզուներ և տառաշար** Վեբ կայքը կլինի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն): Բոլոր լեզուներով գրված տեքստային ինֆորմացիայի անխափան ցուցադրման համար հարկավոր է, որպեսզի կայքը գործի Unicode (UTF-8) տառաշարի հիման վրա: **Որոնման համակարգեր** Համաշխարհային որոնման համակարգերից այցելություններ ապահովելու համար, կայքը տեխնիկապես այդ համակարգերին հնարավորություն կընձեռի առավելագույնս խորը ինդեքսացնելու կայքում զետեղված ինֆորմացիան օգտագործելով SEF հասցեներ: **Կայքի բաժիններ/մոդուլներ** **ա) Գլխավոր էջ** Գլխավոր էջը պետք է պարունակի հաճախ թարմացվող բաժինների վերջին թարմացումները, ինչպես նաև հատուկ գրաֆիկական բլոկեր, որոնք շեշտված կներկայացնեն կայքի ամենակարևոր բաժինները և կունենան հղում տվյալ բաժինների վրա: **բ) Մեր մասին** Տվյալ բաժնում պետք է զետեղված լինեն տեղեկություն ՔԱԳՎ-ի առաքելության, գործառույթների, իրավական դաշտի, պատմության, ՔԱԳՎ-ի կառուցվածքի /աշխատակազմի/, ղեկավարման, կոլեգիալ մարմինների և թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների վերաբերյալ, ըստ ենթաբաժինների և մոդուլների: **գ) Միջազգային համագործակցություն** Տվյալ բաժնում պետք է զետեղված լինեն ՔԱԳՎ-ի միջազգային կազմակերպություններին ու կոնվենցիաներին անդամագրման և համագործակցության վերաբերյալ տեղեկատվություն, ըստ ենթաբաժինների և մոդուլների: **դ) Մեդիա կենտրոն** Տվյալ բաժնում պետք է ներառվի նորությունները, հայտարարությունները, պարզաբանումները և լուսանկարները, ըստ ենթաբաժինների և մոդուլների: Ամեն գրառում կարող է պարունակել վերնագիր, նախաբան, բովանդակություն և հրապարակման ամսաթիվ: Ցանկացած գրառման պետք է հնարավոր լինի կցել լուսանկարներ, լուսանկարների ալբոմ, ինչպես նաև YouTube համակարգում տեղադրված տեսանյութ: **ե) Գործունեություն** Տվյալ բաժինը կպարունակի օդանավակայանների, օդանավ շահագործողների, «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի, «Ավիաբուժ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի և այլ ընկերությունների մասին տեղեկատվություն: Բաժինը կներառի նաև խորհրդատվություն, չվացուցակ, ներքին աուդիտ, գնումներ ենթաբաժինները ըստ ենթաբաժինների և մոդուլների: **զ) Դիմեք մեզ** Գործածողները կարող են կայքի միջոցով առցանց դիմել ՔԱԳՎ պետին: Դիմումը ավտոմատ կարգով կներմուծվի նախարարության Mulberry համակարգ և գործածողը կստանա 12 նիշանոց հսկիչ կոդ: Տվյալ հսկիչ կոդի օգնությամբ նա կարող է հետևել իր դիմումի ընթացքին: Բաժինը կպարունակի նաև տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձևը: **է) Քաղաքացիների ընդունելություն**					

		Տվյալ բաժինը կպարունակի քաղաքացիների ընդունելության կարգը, ընդունելության ցուցակագրված քաղաքացիների ցանկը և ընդունելության արդյունքները: **ը) Հաշվետվություններ և Վիճակագրություն** Տվյալ բաժինը կպարունակի ՔԱԳՎ տարեկան վիճակագրությունը և հաշվետվությունները, որոնցում զետեղված փաստաթղթերը ներկայացված են լինելու ֆայլերի տեսքով: Ցանկալի է ֆայլերի PDF ֆորմատը, սակայն համակարգը պետք է թույլ տա կցել նաև այլ ֆորմատի փաստաթղթեր: Ցանկացած ներմուծված փաստաթուղթ պետք է ունենա վերնագիր, նկարագրություն, ինչպես նաև տեղադրման ամսաթիվ: Համակարգը ավտոմատ կարգով կհաշվարկի բեռնված ֆայլերի չափը, ինչպես նաև բեռնումների քանակը: **թ) Հետադարձ կապ** Տվյալ բաժինը կպարունակի ՔԱԳՎ-ի կոնտակտային տվյալները և հասցեի քարտեզային պատկերը: **ժ) Որոնում** Կայքը պետք է ունենա գլոբալ որոնման համակարգ, որը թույլ կտա կատարելու որոնում կայքի ցանկացած բաժնում: **ի) Բաժանորդագրություն** Գործածողը պետք է հնարավորություն ունենա բաժանորդագրվել կայքի հաճախ թարմացվող բաժիններին, ինչպիսին է օրինակ լրատվական բաժինը: Տվյալ բաժինների բաժանորդագրությունը պետք է հասանելի լինի նաև RSS Feed-երի միջոցով: **լ) Սոցիալական ցանցերի տարածման մոդուլ** Կայքի ցանկացած էջի ներքևում պետք է տեղադրվի հատուկ մոդուլ, որը հնարավորություն կտա տարածել տրված էջը սոցիալական ցանցերում, ինչպիսին են Facebook, Twitter, Live Journal և այլն: **խ) Ստատիկ էջեր** Համակարգը պետք է թույլ տա ստեղծել անսահմանափակ քանակի ստատիկ HTML էջեր: **ծ) Հղումներ** Տվյալ բաժինը պետք է պարունակի հղումներ բոլոր հանրապետական գործադիր մարմինների, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Սահմանադրական դատարանի, e-draft.am և ՀՀ կառավարության պաշտոնական կայքերին: **կ) Պարտադիր և կամավոր զեկույցներ** Տվյալ բաժնում պարունակվող տեղեկատվությունը կից ներկայացված է սույն փաստաթղթին (Ֆայլերը կցվում են): **Տիրույթի անվանում և տեղակայում (hosting)** Կայքի տիրույթի/ենթատիրույթների անվանման գրանցումը, ինչպես նաև վերը նշված տեխնիկական պայմանները բավարարող հոսթինգ ծառայության կամ առանձնացված սերվերի տրամադրումը, կատարվում է ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից: **Բովանդակության կառավարման համակարգ (ԲԿՀ)** Կայքը կունենա բովանդակության կառավարման համակարգ, որը թույլ կտա ադմինիստրատորներին ղեկավարել կայքի բովանդակությունը առանց տեխնիկական գիտելիքների, համալրել էջերի բովանդակությունը և ստեղծել նոր բաժիններ: ԲԿՀ-ի և կայքի առաջնային մասի ծրագրային կոդը պետք է ֆիզիկապես լինեն տարբեր հատվածներում: ԲԿՀ-ն պետք է հասանելի					

		լինի միայն համապատասխան թույլատվություններ ունեցող հասցեներից (VPN-ի մոջոցով) և պարտադիր կերպով SSL սերտիֆիկատի առկայությամբ: Կատարողի կողմից պետք է ներմուծվեն միայն կայքի գործունեության համար նախատեսված "բառարանային" տեքստերը:					

Հիմնվելով փվյալ տեխնիկական առաջադրանքի վրա, առաջարկում ենք մշակել ՔԱԳՎ պաշտոնական նոր վեբ կայքը ***մինչև 15.12.2017թ.****: Գինը պետք է ներառի առնվազն 1 տարվա երաշխիքային և 1 տարվա ընթացիկ սպասարկում, որից հետո կատարողը պարտավոր է ՔԱԳՎ-ին տրամադրել ադմինիստրատորի մուտքանուն գաղտնաբառը՝ հետագա կայքի հետ կապված փոփոխություններ և սպասարկումն իրականացնելու նպատակով: Ստեղծել և տրամադրել օգտագործողի մուտքանուն և գաղտնաբառ՝ առանց ադմինիստրատորի միջամտության կայքի ենթաբաժիններում տեքստային փոփոխություններ կատարելու համար: Ադմինիստրատորի մուտքանուն և գաղտնաբառ ունեցող օգտագործող անձը հնարավորություն ունի կատարել կայքի հետ կապված յուրաքանչյուր փոփոխություն՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային, իսկ մուտքանուն և գաղտնաբառ ունեցող օգտագործողը հնարավորություն կունենա փոփոխել տեքստային, ֆոտո և վիդեո ֆայլերը: Ողջունվում են նաև նոր ֆունկցիոնալ առաջարկները:*

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
Վարչության
Հ/Հ 900013207023
Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139
Հ. Մարգարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 01 » Դեկտեմբեր 2017թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հունվար	փետրվար	մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72411300	համացանցային (www) էջի ձևավորման ծառայությունների	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	3350000	3350000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 «Զվարթնոց» օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
Վարչության
Հ/Հ 900013207023
Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139
Հ. Մարգարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 2017թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	Ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2017թ. կնքված
«ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն